Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

8 սեպտեմբերի 2016 թ.

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիր

Վարկ No P148836

Պայմանագիր # TAR-03

Ալաշկերտի մանկապարտեզի կառուցում

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի համար և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել **"Ալաշկերտի մանկապարտեզի կառուցման"** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սույնով **Արմավիրի մարզ, Ալաշկերտ գյուղի Ծրագրի Իրականացման Կոմիտեն** հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ **Ալաշկերտի մանկապարտեզի կառուցման համար**: Որակավորման պահանջները ներառում են. ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **246.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման և վերակառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **137.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **274.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **27.000.000 ՀՀ** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "**Քաղաքացիական**", "**Էներգետիկական**" և "**Հիդրոտեխնիկական**" լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել Մրցութային

փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00 – 17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 405 սենյակ, 4-րդ հարկ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները Մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2016 թ-ի հոկտեմբերի 6-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները ***չեն կարող*** ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Կարեն Հովհաննիսյանին

Արմավիրի մարզ, Ալաշկերտ գյուղի Ծրագրի Իրականացման Կոմիտե

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ալաշկերտ, 1-ին փողոց, տուն 1 /գյուղապետարան/

Հեռ: +374 98 424 045